



ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ Միակ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոս իր վերջին Մ. Նահանգներ այցելութեան ընթացքին, նախագահեց Գերագոյն Խորհուրդի հերթական նիստին, 30 հոգեւորական եւ աշխարհական անդամներու մասնակցութեամբ: Այդ առիթով տօնախմբուեցաւ նաեւ Մ. Նահանգներու Արեւմտեան թեմի 90-ամեակը, ուր հարիւրաւոր պատասխանատու հաւատարիմ հաւատացեալներու առջեւ Վեհր իր հայրական խօսքին մէջ ներկաներուն ըսաւ.

**«ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ ՊԻՏԻ ԿԱՐՈՂԱՆԱՆՔ ՅԱՂԹԱ-
ՀԱՐԵԼ ՆԱԵՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՌԱՎՏՈՒՄ ԵՒ
ՀԱԿԱԿԱՆՈՆԱԿԱՆ ԸՆԹԱՅՔՆԵՐԸ, ՈՐ ԱՌԿԱՅ ԵՆ ԱՅՍԵՂ՝
ԱՍԵՐԻԿԱՅԻ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԵՒ ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ
ԹԵՄԵՐՈՒՆ: ԵՐԲ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ ՊԱՌԱՎՏՈՒՄՈՒ Է,
ՉԻ ԿԱՐՈՂ ԿԵՐՏՈՒԻԼ ՄԻՈՒԹԻԻՆԸ ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԻ»:**

Գարեգին Բ. Ամենայն Հայոց, երբ իր այս խօսքերով՝ պատակտումը վերացնելու կոչ ուղղեց հեռաւոր Ամերիկաներէն, իսկ երկու ժամուան հեռաւորութեան վրայ գտնուող Պէյրութէն, գոյութիւն ունեցող պատակտումը աւելի խորացնելու համար, յերիւրանքներու կեղծիքի, սուտերու եւ պատակտումի տուրքակը շարկած ուսին, շնչասպառ Աթենք հասաւ, պատակտումի եւ անջատողական շարժումի ներկայացուցիչը որ աջ ու ահեակ վազեց Աթենքի մէջ՝ ինքզինքնին լիազօրութիւն դիրք եւ տիրոջ տալով, պատակտումի զօրակցութիւն մուրալու համար:

Պարզ էր թէ՛ որոշ կողմերու մօտ զօրակցութիւն պիտի գտնէր, հաստատելու համար իր պատակտիչ եւ ոչ ռամկավարական ուղղափառութիւնը:

Եւ «որպէս համոզիչ ապացոյց» իր փանջունիական «Միսիա»ին, Պարոն Անջատումը մատի վրայ համրուող անուղղայ՝ շահախնդիր՝ անջատողականներէ խմբաւորում մը կազմելէ ետք, հրաժեշտ տուաւ Աթենքին:

Այս պատակտող անձը, անձանօթ համալսարանի մը մէջ անձանօթ նիւթի փրօքէսօր Հրայր Յովիվեան եւ իր խմբակը, որոնք հատ ու կենտ ցրուած են զանազան գաղութներու մէջ, 1998 թուականէն օրինազանցութիւններով Խարապեանի գլխաւորութեամբ դեկա-վարեցին Ռ.Ա.Կուսակցութիւնը մինչեւ 2015 թուականը եւ շարունակաբար գաղափարական սկզբունքային օրինազան-ցութիւններ կատարելով, կեղծական վարչութիւնը վերածելով բռնատիրական վարչութեան մը, որ կը գործէր առանց կարեւորութիւն տալու օրինականութեան, բարեկարգութեան եւ համերաշխութեան կոչերուն եւ անոնց թելադրութիւններուն: Այս անպատասխանատու անձերը տարիներ շարունակ զգաստութեան հրաւիրուեցան, սակայն անդրդուելի մնացին եւ շարունակեցին կուսակցութիւնը քանդել, զանազան պատրուակներ առարկելով, եւ մանաւանդ պատաս-խանատու անձերը, որոնք կառչած մնացին իրենց դիրքերուն վրայ, վասն զի շատ կարեւոր պատճառներ պէտք է ունենային, որպէսզի տեւականօրէն իրենց աթոռներուն վրայ մնային: Երեք կարեւոր պատճառներ կրնանք կռահել, որ կրնան ունեցած ըլլալ:

- 1. Կուսակցութիւնը քանդել՝ մութ ոյժերու կողմէ դրդուած:
- 2. Շահարկութեան կարեւոր հարց պէտք է գոյութիւն ունենայ:
- 3. Որպէսզի չյայտնուի մութ ոյժերու աղբիւրը:

Սակայն այս պարագային, ողբերգական հարց մը գոյութիւն ունի: Որոշ անմեղ անձեր, իրենց հետ զոհ կ'երթան եւ կամ կրնան ուրիշ անձեր նաեւ, որոնք իրենց պէս կը վարձատրուին:

ՀՀ նախագահ Արմէն Սարգսեան. «Հայրենադարձութիւն անպայման պիտի ըլլայ»

Հայաստանի մէջ ներքա-ղաքական վերջին իրադար-ձութիւններէն ետք Հայաստանի եւ հայ ժողովուրդի նկատմամբ միջազգային հանրութեան վերաբերումը տասն անգամ աւելի բարձր է, քան ասկէ մէկ ամիս առաջ: Ըստ «Արմէնփրէս»-ի Յաղթանակի զբօսայգի մէջ լրագրողներու հետ ձեպագրոյցի ժամանակ այս մասին ըսած է ՀՀ նախագահ Արմէն Սարգսեան:



«Պէտք է հպարտ ըլլալ այսօրուայ Հայաստանով:

Հպարտ, որովհետեւ կրցանք ընել այնպիսի բան, որ որեւէ ուրիշ երկիր կամ պետութիւն վերջին տարիներուն, տասնամեակներուն չէ կրցած ընել: Անիկա յեղափոխութիւն է հայկական ձեւով, ուր մարդիկ յեղափոխութիւն կ'ընեն առանց ընդհարումներու, ծաղիկներով եւ ժպիտով, ուրախութեամբ եւ փուչիկներով», - ըսած է ան:

Լրագրողի այն հարցին, հանդիպած է արդեօք Արմէն Սարգսեանը Հանրապետութեան երրորդ նախագահի հետ, Արմէն Սարգսեան պատասխանեց, որ թէ խմած է Սերժ Սարգսեանի հետ:

«Սերժ Սարգսեանի հետ հանդիպած եմ մի քանի օր առաջ, քննարկած եմ իրավիճակը, միասին թէ խմած ենք», - ըսած է Արմէն Սարգսեան:

Ան շնորհաւորեց նաեւ լրատուամիջոցներու ներկայացուցիչները՝ նշելով, որ լրատուական դաշտը եւս լուրջ ներդրում ունի այս փոփոխութիւններու մէջ: «Ոչ միայն ես, այլ ամբողջ աշխարհը կը գնահատէ անիկա:

Մենք պէտք է այդ ողջ դրական ներուժը, եռանդը ներդնենք, որպէսզի մեր երկիրը կառուցուի եւ դառնայ աւելի լաւ», - նշեց ան: ՀՀ չորրորդ նախագահը վստահեցուց, որ հայրենադարձութիւն անպայման պիտի ըլլայ: «Ոեւէ հայու հայրենիքը այստեղ է: Ես կը տեսնեմ՝ վերադարձ արդէն կայ, ամէն ինչ կախուած պիտի ըլլայ մեզմէ:

Եթէ որոշ ժամանակ անց այդ դրական ներուժը ըլլայ եւ երկիրը առաջ երթայ, եթէ դրական քայլերը ըլլան, ապա կը կարծեմ, որ վերադարձ անպայման պիտի ըլլայ», - աւելցուց նախագահը:

Ով ով է Հայաստանի նոր կառավարությունում

Այսօր՝ մայիսի 12-ին ամբողջությամբ ձեւավորվեց Նիկոլ Փաշինյանի գլխավորած Հայաստանի նոր կառավարությունը, ՀՀ նախագահի հրամանագրերով նշանակվեցին բոլոր նախարարները:

Ապրիլի 23-ին ՀՀ վարչապետի պաշտոնից Սերժ Սարգսյանի հրաժարականից հետո համաժողովրդական պիքի ֆոնին իշխանության եկած կառավարությունում, որը բաղկացած է վարչապետից, առաջին փոխվարչապետից, 2 փոխվարչապետից եւ 17 նախարարներից, ընդամենը երկուսն են կին: Նրանցից մեկը Ազգային ժողովի «Ելք» խմբակցության պատգամավոր, «Լուսավոր Հայաստան» կուսակցության փոխնախագահ Մանե Թանդիյանն է. նա զբաղեցրել է աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի պաշտոնը: Երկրորդը Լիլիթ Մակունցն է, նշանակվել է մշակույթի նախարար:

Շարունակում էջ 1-ին

ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ Միակ ՃԱՆԱՊԱՐՀԸ...

Իսկ եթե հարց տրուի, թե այս մարդիկը, այնքան տարիներու ընթացքին գործ մը չէ՞ն կատարած, պատասխանը այն է: Նախ կուսակցությունը քանդեցին եւ երկրորդ յաճախ առիթներով նկարուեցան, որպէսզի թերթերուն մէջ հրատարակուին եւ ուրախանան:

Սակայն, այս բոլոր տարիներուն ընթացքին, գտնուեցան հաւատարիմ գաղափարական ընկերներ, որոնք յատուկ զեկոյցներով նոյնիսկ որոշ ուսումնասիրություններով, հիմնուելով Ռ.Ա.Կ ծրագիր-կանոնագրի յօդուածներուն վրայ, այս մտորածներուն ուշադրութեան յանձնեցին այս տխուր եւ պառակտուած վիճակը, սակայն օգուտ չբերաւ, եւ եթե այդ կոչերը հաւաքենք, թերեւս 300-400 էջերէ բաղկացած գիրք մը կազմէ:

Այս բոլոր փորձերէն եւ ջանքերէն ետք, երբ այլևս ուրիշ լուծում չմնաց, խումբ մը հաւատարիմ ընկերներ գնահատեց շրջաններէ, հաւաքուեցան եւ ըմբոստացան դասալիքներու օրինական-ցություններուն դէմ եւ այդ ձեւով ծնունդ առաւ Վերականգնումի Շարժումը:

Այս վերականգնումի շարժումին առաջին գործը եղաւ, որպէսզի շարժումը օրինաւոր դառնայ ճշմարիտ եւ իրաւ Ռ.Ա.Կուսակցութիւն, անմիջապէս ձեռնարկեց Հայաստանակեդրոն դառնալ, Հայաստանի Ռամկավար Ազատական Կուսակցութեան հետ ձուլուելով, եւ այդ ձեւով մարմին առաւ Հայաստանա-կեդրոն Ռ.Ա.Կուսակցութիւնը, որ Հայաստանի Հանրապետութեան սահմանադրութեան կողմէ ճանչցուած կուսակցութիւնն է 1992-էն, իր ծրագիր-կանոնագրով իր որոշով եւ իր կնիքով, որուն անդամակցությունը բոլորին համար բաց է:

Ինչո՞ւ բացատրական այս նախաբանը. որպէսզի ընթերցողները իմանան, որ 1998 թուականէն պատահած եղելութիւնները ճշմարտութիւնները, որոնք փաստացիօրէն արձանագրուած են մամուլի եւ փաստաթուղթերու մէջ:

Լիբանանի մէջ իրենք զիրենք ռամկավար կոչած իմաստակ տեսաբաններու, երկու օրինազանց արարքներուն մասին կ'ուզենք անդադառնալ, որպէսզի հանրութեան փաստենք, թե այս մնացորդացները, շեղած են իրենց գաղափարախօսութենէն եւ սկզբունքներէն եւ իրենք այլևս չեն ներկայացներ աւանդական Ռ.Ա.Կուսակցութիւնը:

Ուրեմն, այդ հանրածանօթ տեսաբաններէն մէկը, որ Աթէնք ժամանեց եւ այստեղ Աթէնքի մէջ իրենց որպէս կոյր հետեւորդներէ կազմուած խումբ մը ստեղծեց եւ զիրենք լիազօրեց որպէս մէկ մասը իրենցմէ, այդ կը նշանակէ թէ, Աթէնքի հետեւորդները կը պատկանին եւ ենթակայ են այդ խումբին, եւ կը հետեւին իրենց որդեգրած քաղաքականութեան եւ կը հետեւին ու կը դաւանին անոնց մտածողութիւնը եւ գործունէութիւնը, եւ համակարծիք են անոնց յայտարարություններուն. Իրողութիւն մը, որ իրենց գործունէութիւնը հաստատեց:

Ուստի իրենց ուշադրութեան կը յանձնենք՝ իրենց խմբակի առաջին արարքին եղելութիւնը, որովհետեւ աւելի ուշ իրենք պարտաւոր են մեր հարցումներուն հրապարակաւ եւ գրաւոր պաշտօնապէս պատասխանել:

Ուրեմն, ի՞նչ էր Պէյրութի խմբակի առաջին օրինազանց յայտարարությունը:

Պէյրութ հրատարակուող Զարթօնք օրաթերթի, 2որեքշաբթի 6 Յուլիս 2016 թուականի թիւ 222-ին մէջ լոյս կը տեսնէ հաղորդագրութիւն մը, ուր Լիբանանի այդ խմբակէն երկու ներկայացուցիչներ կը ներկայանան Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին եւ հրապարակաւ կը յայտարարեն հետեւեալ հաղորդագրութիւնը:

«Ընկ. Մեակ Յակոբեան, Արամ Ա. Վեհափառին փոխանցեց Ռ.Ա.Կ-ի վճռակամութիւնը՝ մէկ կողմ դնելու անցեալի վերաբերող ամէն բարդոյթ եւ լաւագոյն յարաբերութեան մէջ ըլլալու Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հետ, շեշտելով որ «Եկեղեցական տազնապը այլևս պատմութեան կը պատկանի.....»:

Այդպիսի անուղղայ՝ սղէտ՝ երդումնադրուծ եւ դաւաճանական արարք մը, եկեղեցոյ միասնականութեան հաւատացող մեր հանգուցեալ ղեկավարներուն ոսկորները շուտ պիտի բերէ իրենց գերեզմանին մէջ:

Նոյն հաղորդագրութիւնը կը հրապարակուի նաեւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կայքին վրայ՝ գոր կը հրատարակենք ամբողջութեամբ:

ՄԵՕԻ
ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ՀՐԱՏԱՐԱԿԱՍԾ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Առնում «Զարթօնք» Օրաթերթէն

ԱՆԹԻԼԻԿԱՍ – Ռամկավար Ազատական Կուսակցութեան նորընտիր Կեդրոնական Վարչութեան պատուիրակութիւնը, որուն մաս կազմեցին Ընկերներ Մեակ Յակոբեան եւ Վարդան Ուզունեան, այցելութիւն մը տուին Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին, պաշտօնապէս շնորհակալութիւն յայտնելու Վեհափառին, վերջերս Երեւանի մէջ տեղի ունեցած ՌԱԿ 27-րդ Պատգամաւորական Ժողովին իր յղած Օրհնութեան գիրին համար:

Այցելութիւնը առիթ մըն էր Վեհափառ հօր հետ արծարծելու Հայ ազգն ու Կուսակցութիւնս յուզող հարցեր:

Վեհափառը շնորհաւորելով ՌԱԿ Կեդրոնական նորընտիր վարչութիւնը, վերահաստատեց իր կեցուածքը Միւրեքեան Հայ Երեք քաղաքական կուսակցություններու գոյութեան կարեւորութեան վերաբերեալ, որ եկեղեցիին կողքին անգուցական դեր ունեցած են սփիւռքահայութեան կեանքի կազմակերպման աշխատանքին մէջ:

Վեհափառը շեշտը դրաւ կուսակցություններու միջոյ համերաշխ գործունէութեան կարեւորութեան վրայ, յօգուտ ժողովուրդի բարօրեան եւ Հայ Դատի հետապնդման:

Վեհափառը տեղեկություններ տուաւ Միսի Կաթողիկոսութեան կալուածները վերադարձնելու համար Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան բացած դատին նորություններուն առնչութեամբ:

Ընկեր Մեակ Յակոբեան, Արամ Ա. Վեհափառին փոխանցեց ՌԱԿ-ի վճռակամութիւնը մէկ կողմ դնելու անցեալի վերաբերող ամէն բարդոյթ եւ լաւագոյն յարաբերութեան մէջ ըլլալու Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հետ, շեշտելով, որ «Եկեղեցական տազնապը այլևս պատմութեան կը պատկանի, ի տես Հայ ժողովուրդի հոգեւոր եւ մշակութային հարստութիւնները համարուող երկու կաթողիկոսություններու գահակալներուն եղբայրական գործակցութեան:

Իր կարգին, ընկեր Վարդան Ուզունեան Վեհափառ հօր յանձնեց ՌԱԿ 27-րդ Պատգամաւորական Ժողովին անունով յատուկ յուշանուէր:

Մեակ Հաճրեագուպեան անուղղայ, իր սկզբունքներուն անհաւատարիմ Լիբանանի պատկան մարմիններու առջեւ՝ անօրէն յայտարարուած՝ աղարտուած՝ ուխտազանց մէկը չի կրնար եւ իրաւունքը չունի ՌԱԿ-ի անունով նման արարք մը գործելու, եւ յայտարարութիւն կատարելու, իսկ անոր հաւատացողները աւելի լուրջ մարդիկ չեն կրնար ըլլալ:

Ուրեմն, ինչպէս որ կը տեսնէք, ձեր իմաստակ ղեկավարները մեզի յանձնարարած են, թէ ինչ որ պատահած է 60 տարիներ առաջ պէտք է մոռնանք:

Այդ կը նշանակէ մոռնալ մեր ազգի՝ ժողովուրդի սրբությունները: Ինչ որ պատահած է 60 տարիներ առաջ պէտք է մոռցուին:

Պէտք է մոռնանք Վարդանանցներու պատմութիւնը, պէտք է մոռնանք 100 տարիներ առաջ հայ ժողովուրդին դէմ գործուած ցեղասպանութիւնը:

Կը տեսնէք ձեր առաջնորդները, կը տեսնէք ձեր իմաստակ ղեկավարները, որոնք եթէ փնտոէք ամբողջ աշխարհի մարդկային պատմութեան մէջ, իրենց նմանը պիտի չգտնէք:

Եթէ ձեզի համար ինչպէս նաեւ ձեզի զօրակցողներուն եւ ձեզ քաջալերողներուն բոլորիդ համար հայոց պատմութիւնը եւ մեր ազգը բաճկոն մըն է, կրնաք ձեր վրայէն հանել՝ ուրանալ եւ հեռանալ հայ ժողովուրդի ծոցէն եւ պատկանիլ այլ ազգի մը, որ կը մոռնայ իր ազգը եւ իր պատմութիւնը: Անիկա ձեր գիտնալիք գործն է, ձեր մարդկային իրաւունքն է, միայն թէ մեզի հանգիստ ձգեցէք:

Մենք հպարտ ենք մեր պատմութեամբ, մենք հպարտ ենք մեր հերոսներով, մենք հպարտ ենք մեր մշակոյթով՝ մեր քաղաքակրթութեամբ՝ մեր վերքերով՝ մեր ցաւերով՝ մեր ողբերգություններով եւ մանաւանդ մենք հպարտ ենք մեր Հայաստանեայց Առաքելական Ուղղափառ Սուրբ եկեղեցոյ եւ մասնաւորապէս մենք հպարտ են՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնով եւ հպարտ ենք միասնականութեան ի խնդիր մեր պայքարներուն:

Երեւակայեցէք՝ հայ ժողովուրդին մէջ տակաւին գոյութիւն ունին անձեր՝ խմբակցություններ, որոնք կոչեր կ'ուղղեն մեզի որ մոռնանք մեր անցեալը:



➔ Այս հայրենասեր կոչուած իմաստակները, փոխանակ մեզի թելադրելու, որ մենք հաստատ մնանք մեր հաւատքին՝ հայրենիքին գաղափարին մեր դաւանութեան, մեր եկեղեցիին հանդէպ, մեզի կը թելադրեն *վճռականօրէն որ մոռնանք* մեր անցեալը եւ իրենց հաղորդագրութեան մէջ կ'աւելցնեն յայտարարելով, որ բոլոր այս սրբութիւններուն հաւատացողները *«պէտք է մէկ կողմ դնեն անցեալի վերաբերող ամէն բարդոյթ»*, այսինքն միլիոններով հայեր հոգում եւ մտքով խանգարուած են, այսինքն բարդոյթներ ունին, այսինքն այս միլիոնաւորները «complex»ներ ունին:

Ըստ երեւոյթին անհաւատարիմ՝ ուխտանէնք այս անհատը, իր օրինազանցութեան չարագործութեան անհաւատարմութեան դասալքութեան, դասընթացք մը բոլորեց, արքելաբակուած թանցր խաւարոտ օթեակներուն մէջ:

Պէյրութի մեր իմաստակ տեսաբաններուն երկրորդ արարքը՝ որուն մասին կ'ուզենք անրադատնալ, իրենց երկրորդ այցելութեան մը հաղորդագրութիւնն է, որ կարդացինք «Ազատ Օր»ի Չորեքշաբթի 11 Հոկտեմբեր 2017-ի թիւին մէջ, ուր կրկին անգամ իրենք զիրենք Ռ.Ա.Կ. կոչած մարմին մը, Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին կ'այցելեն եւ այդ հանդիպումին՝ տեսաբան Մերձիօ Նահապետեանի հետեւեալ միտքերուն ակնարկելով՝ «անցեալին վերաբերող տխուր եղելութիւններուն ան շեշտեց թէ կեանքը սառած պատկեր մը չէ, այլ շարժանկար եւ անառողջ գտաւ հին պատկերին մէջ սառած մնալու եւ անցեալը ապրիլ յամարող կարգ մը մարդոց մտայնութիւնը»:

Դժբախտաբար առաջին արարքին հաղորդագրութեան ճիշդ նոյն ոգին եւ միտքը կ'արտայայտէ տեսաբանին յայտարարութիւնը, որուն մասին մենք անդրադարձած ենք մանրամասնօրէն «Նոր Աշխարհ»ի Երկուշաբթի 6 Նոյեմբեր 2017ի, թիւ 41 համարին մէջ, վերնագիր ունենալով *«Նկար եւ Յայտարարութիւն մը»* որ կրկին անգամ ամբողջութեամբ կը հրատարակենք այս թիւին վերջին էջին վրայ, ընթերցողներուն յիշողութեան մէջ թարմացնելու համար մեր գաղափարը եւ մեր վերոյիշեալ բոլոր փաստերը, որոնք անժխտելի ապացոյցներ են որ իրենք տարիներ առաջ արդէն շեղած են Ռ.Ա.Կ.եան սկզբունքներէն եւ իրենք չեն ներկայացներ ւանդակակն Ռ.Ա.Կ.ը եւ մանաւանդ այսօրուան Ռ.Ա.Կ.ը որ կը վերանորոգուի, կը վերականգնի հաստատօրէն՝ որպէս Հայաստանա-կեդրոն կուսակցութիւն:

Ինչպէս որ կը հաստատեն վերոյիշեալ արարքները, մենք եւ միայն մենք Ռ.Ա.Կուսակցութիւնը ներկայացնող օրինական կուսակցութիւնն ենք, իսկ մասի վրայ համարուող խմբակը, որ հրապարակ իջած է որպէս Ռ.Ա.Կուսակցութիւն կը մրտտէ, կ'աղաւաղէ անցեալի Ռ.Ա.Կ.ը իր անընդունելի վարքով եւ օրինազանցութիւններով:

Դիտեցէք, ի նչ կ'ընեն. աջ ու ձախ կը վազեն, կը հեռաձայնեն, անակնկալ այցելութիւններ կը կատարեն եւ մարդոց կը ստեպեն եւ կը փորձեն պարտադրել, որ զիրենք լսեն թէ իրենք օրինական են: Այս մարդիկը կ'ուզեն իրենց անուղղայ, պառակտիչ, ապօրէն վարուելակերպով եւ անվայել վարքով, մարդոց մտքերուն մէջ կը փորձեն խառնակութիւն ստեղծել, անհանգստացնելով զիրենք:

Մարդիկ, որ տասնեակ տարիներէ ի վեր, ճանչցած են զիրենք գաղութիւն մէջ որպէս ծանօթ Ռամկավարներ, եւ յանկարծ այս անուղղաները կը ներկայանան հաւատացեալներուն՝ որպէսզի զիրենք համոզեն որ ասոնք Ռամկավարներ չեն:

Ինչպէ՞ս կրնայ ըլլալ որ, այս մոլորեալները այսքան ծիծաղելի դառնան: Ո՞ր մնաց ազգային եւ մարդկային արժանապատուութիւնը, ո՞ր մնաց գաղափարախօսական արժանապատուութիւնը:

Դատելով իրենց գործած այս վարքերը, մենք կրնանք եզրակացնել որ, այս անձերը տարուած են կիրքերէ, վրէժխնդրութենէ, ատելութենէ եւ կորսնցուցած են իրենց ինքնագիտակցութեան զգացումը, պարզապէս չեն գիտեր ինչ կ'ընեն, եւ մենք զիրենք կը հրաւիրենք զգաստութեան ինքնաճանաչութեան եւ առարկայական մտածողութեան:

Վերոյիշեալ բոլոր եղելութիւնները կը հաստատեն որ, այս մարդոց հոգիներուն մէջ ամպոտած եւ մթազնած է սկզբունքի հաւատքի ծառայութեան գաղափարի մտածումը եւ դարձած են աղաւաղուած միտքերու ստրուկներ եւ ինքնագործ մեքենաներ:

Այս երեւոյթներէն դատելով, մենք իրենց կ'ըսենք, թէ իրենք մեր շրջանակին մէջ շրջելով՝ չեն կրնար միեւնոյն ժամանակ երեսանց

«Երկու տիրոջ ծառայել»

Քանի որ զիրենք խմբաւորողները, մէջտեղ բերողները, ինչպէս տեսանք, բացայայտօրէն եւ վճռականութեամբ, հրապարակաւ յայտարարած են, թէ ուր կը պատկանին, եւ մենք այս հարցով մեր այս

յօդուածին մէջ, իրենց կողմէ յայտարարուած երկու փաստացի հաղորդագրութիւնները հրատարակեցինք:

Ուստի մեր իրաւունքն է, արդարօրէն իրենցմէ պահանջելու, որ իրենք պէտք է ճշդն իրենց պատկանելիութեան հաւատարմութիւնը, եւ այս կրնայ պատահիլ հետեւեալ ձեւով եւ կարգով:

1.Պէտք է այս խմբաւորումը հաղորդագրութիւն մը հրապարակէ, որուն մէջ պէտք է հերքէ Պէյրութի աղետաբեր տեսաբաններու վիրաւորող եւ ամօթալի յայտարարութիւնները, երբ միլիոններով Մայր Աթոռի հաւատարիմ հաւատացեալները բարդոյթներ – complex – ունեցողներ կ'որակեն եւ մեզի կը թելադրեն որ մենք պէտք է մոռնանք մեր սկզբունքները:

2.Նմանապէս յատուկ գրաւոր նամակ մը, որ կը հաստատէ, իրենց դաւանական համայնքային պատկանելիութիւնը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հանդէպ:

3.Այս երկու հաղորդագրութիւնները կ'առաքուին «Նոր Աշխարհ» շաբաթաթերթին՝ որպէսզի հրապարակաւ լոյս տեսնեն:

4.Նոյն իմաստով երկու գրաւոր կը շեշտենք գրաւոր նամակներ նաեւ կառաքուին Յունահայոց թեմի Առաջնորդական տեղապահ Տէր Խորէն վրդ. Առաքելեանին ինչպէս նաեւ Յունահայոց թեմական խորհուրդին:

Այս բոլորը կ'առաջարկենք եւ կը պնդենք, որպէսզի յստականայ ձեր գաղափարական եւ պատկանելիութեան դիրքորոշումը հանրութեան առջեւ:

Այս է մեր հաւատքը՝ այս է մեր գաղափարախօսութիւնը եւ դիրքորոշումը, որ՝ ոչ պայմանական հայրենասիրութիւն եւ ոչ ալ պայմանական եկեղեցասիրութիւն է, այլ հայրենիք եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վեհապետութեան գերակայութիւնն է եւ կը հաստատենք՝ այս է մեր դաւանանքը:

Ուստի այդ բոլորը կ'առաջարկենք եւ կը պահանջենք ձեզմէ՝ որ մեր առաջարկներով դուք ճշդէք ձեր հաւատամքը եւ դիրքորոշումը, յունահայ համայնքի հասարակութեան առջեւ:

Մենք պէտք է շեշտենք որ, Հայաստանեայց Առաքելական Ուղղափառ եկեղեցիները մեր սրտերուն, մեր հոգիներուն, մեր խոհերուն, մեր հաւատամքին մէջ, իրենց պայծառ լուսաշող եւ որպէս հայ հոգիի խորան, յարգանքի մեծարանքի սիրոյ՝ ուխտի եւ գոյութեան տեղ ունին, բոլորն ալ մերն են եւ բոլորիս կը պատկանին, սկսեալ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութենէն, Երուսաղէմի Ս. Յակոբեանց դպրեվանքէն, Պոլսոյ Պատրիարքութեան Աթոռէն եւ Վեհապետական Գերկայութեամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն:

Այս է հայ ժողովուրդի եւ Հայաստանեայց Առաքելական եկեղեցոյ հոգեւոր գոյութիւնը եւ պատմութիւնը. Այս եղած է, հայ հոգիի յաւերժական գոյութեան եւ գոյատեւման հազարամեակներով արմատացած խարիսխը, որովհետեւ անիկա բազմած է հայրենի հողին, Արարատի ապահով փէշերուն վրայ, որուն սրբալոյս խորանէն կը ճառագայթէ հայ հոգիի հաւատքի անսասանութեան եւ յաւերժականութեան լոյսը, որ Յաւիտենականութեան եւ ճշմարտութեան միակ ճանապարհն է:

«Նոր Աշխարհ»

Արցախի Մէջ Ծնունդներուն Թիւր Աճած Է

Ընթացիկ տարուան Յունուար-Ապրիլ ամիսներուն, Արցախի մէջ ծնունդներուն թիւը կազմած է 719, նախորդ տարուան նոյն ժամանակահատուածի 708-ի փոխարէն:



Այս մասին, ըստ «Artsakhpress.am»-ի, յայտնած են ԱՀ արդարադատութեան նախարարութեան ՔԿԱԳ եւ նոտարական գործակալութեան կեդրոնական մարմինէն:

Ամենաշատ ծնունդները արձանագրուած են Ստեփանակերտի մէջ՝ 293, նախորդ տարուան 290-ի փոխարէն, իսկ շրջաններէն Մարտունիի մէջ 109, 2017 թուականի նոյն ժամանակահատուածի 87-ի փոխարէն:



Շարունակում է 1-ին

Ով ով է Հայաստանի նոր կառավարությունում...

ԲՀԿ-ի քվոտայով 2010-ին աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար նշանակված Արթուր Գրիգորյանը հիմա էլ զբաղեցրել է Էներգետիկ ենթակառուցվածքների եւ տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի պաշտոնը: Նախկին քննիչ Աշոտ Հակոբյանը դարձել է տրանսպորտի, կապի եւ ՏՏ նախարար: ԲՀԿ-ական Լեւոն Վահրադյանը զբաղեցրել է սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարի պաշտոնը: Իսկ ԲՀԿ քվոտայով 2012-ին սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարար Հրայր Թոստամյանը նշանակվել է արտակարգ իրավիճակների նախարար:

Նիկոլ Փաշինյանի կառավարությունում ամենաերիտասարդ անդամը սփյուռքի նախարար Մխիթար Հայրապետյանն է՝ 27 տարեկան, ամենատարեցը՝ Զոհրաբ Մնացականյանը՝ 52 տարեկան: Կառավարության անդամների միջին տարիքը 40-ից քիչ ավելի է:

ԱՐԱՐԱՏ ՄԻՋՈՅԱՆ

Առաջին փոխվարչապետ Արարատ Միրզոյանը 39 տարեկան է, պատմական գիտությունների թեկնածու: Արարատ Միրզոյանը դասախոսել է Երևանի պետական համալսարանում, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ է, ունի 2 երեխա:



ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՀՀ փոխվարչապետ Տիգրան Ավինյանը 29 տարեկան է, ավարտել է Լոնդոնի Քուին Մերի համալսարանը՝ ստանալով ֆինանսների մագիստրոսի կոչում: 2014թ.-ից հիմնադրել է և ղեկավարում է «Մայքեր Վիժն» ընկերությունը, որը զբաղվում է ծրագրային ապահովմամբ:



2016-ին ՀՀ ՊՆ-ի կողմից պարզեցվել է պատվոգրով ապրիլին եւ մայիսին Հայրենիքի սահմանների պաշտպանությանն ակտիվ մասնակցելու, առաջնագծում մարտական խնդիրները բարեխղճորեն կատարելու համար: «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ է, ունի 2 դուստր:

ՄՇԵՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Փոխվարչապետ Միքայիլ Գրիգորյանը 46 տարեկան է, բանկիր: Աշխատել է Կենտրոնական բանկում, Հայերարտրանկում (հիմա Ամերիա), HSBC բանկում, եղել է Ինտերբանկի գործադիր տնօրենը, ՎՏԲ Հայաստան բանկի գլխավոր տնօրենի տեղակալը:



Նա պարզեցվել է Անանիա Շիրակացու մեղալով: Միքայիլ Գրիգորյանն ունի երկու երեխա:

ԶՈՀՐԱԲ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանը 52 տարեկան է, ավարտել է Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտը: Կրթություն է ստացել

Մանչեսթերի Վիկտորիա համալսարանում: Շատ հարուստ դիվանագիտական կենսագրություն ունի: Աշխատել է ԱԳՆ-ում, Վատիկանում, Լոնդոնում, Ժնևում, Ստրասբուրգում: Եղել է ԱԳ փոխնախարար, 2014-ից ՄԱԿ-ում Հայաստանի ներկայացուցիչ է:



Տիրապետում է հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն լեզուներին: Անկուսակցական է, ամուսնացած է, ունի երկու որդի:

ԴԱՎԻԹ ՏՈՆՈՅԱՆ

Պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանը 51 տարեկան է: Նա ավարտել է Երևանի պետական համալսարանի քաղաքացիական ֆակուլտետը, նաև ՌԴ ռազմադիվանագիտական ակադեմիան: 2004-2007 թվականներին Տոնոյանը եղել է ՆԱՏՕ-ում ՀՀ ՁՈՒ ներկայացուցիչ:



2010-ից 6 տարի զբաղեցրել է պաշտպանության փոխնախարարի պաշտոնը, ապա նշանակվել ԱԲ նախարար: Դավիթ Տոնոյանը ՊՆ-ում պարզեցվել է մի շարք մեղալներով, ունի երկու դուստր եւ մեկ որդի:

ԱՐՏԱԿ ԶԵՅՆԱԼՅԱՆ

Արդարադատության նախարար Արտակ Զեյնալյանը 49 տարեկան է: 1990-1997 թվականներին կամավոր մասնակցել է Հայաստանի եւ Արցախի սահմանների պաշտպանությանը՝ Նիկոլ-Դոման երկրապահ կամավորական ջոկատի կազմում, 1992 թվականին վիրավորվել է եւ կորցրել ոտքը: Եղել է առողջապահության փոխնախարար: 2010-ին դասավանդել է ՀՀ Փաստաբանների դպրոցում եւ ՀՀ Փաստաբանների պալատում: Զբաղվել է իրավապաշտպան գործունեությամբ: Ամուսնացած է, ունի չորս զավակ եւ մեկ թոռ:



ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒՅՈՒՆՅԱՆ

Կրթության եւ գիտության նախարար Արայիկ Հարությունյանը 39 տարեկան է: Մասնագիտությամբ արելեյագետ է, պատմական գիտությունների թեկնածու: Նա 2007-ից դասախոսում է ԵՊՀ-ում, 6 գիտական հոդվածի հեղինակ է:



Արայիկ Հարությունյանը համախոհների հետ հիմնադրել է «Մենք դեմ ենք օտարալեզու դպրոցներին» քաղաքացիական նախաձեռնությունը, «Բանակն իրականում» խմբի անդամ է:

Արայիկ Հարությունյանը Երևանի ավագանու «Ելք» խմբակցության անդամ է, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ:

ԱՏՈՄ ԶԱՆՁՈՒՂԱԶՅԱՆ

Ֆինանսների նախարար Ատոմ Զանջուղազյանը 47 տարեկան է: Տեխնիկական գիտությունների թեկնածու է, մեկ մենագրության, մի շարք հոդվածների եւ զեկույցների հեղինակ: 1995 թվականից

աշխատում է ֆինանսների նախարարությունում: 1999-ից ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ-գլխավոր գանձապետն է: Ատոմ Զանջուղազյանը դասավանդում է մի շարք բուհերում: Անկուսակցական է:



Ամուսնացած է, ունի մեկ դուստր եւ երկու որդի: Տիրապետում է ռուսերեն եւ անգլերեն լեզուներին:

ՍՈՒՐԵՆ ՊԱՊԻԿՅԱՆ

Տարածքային կառավարման եւ զարգացման նախարար Սուրեն Պապիկյանը 32 տարեկան է, պատմաբան: 2012-2016թթ. սովորել է Մանկա Պետերբուրգի պետական համալսարանի ասպիրանտուրայում: «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչության փոխնախագահն է:



ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Միջուրքի նախարար Մխիթար Հայրապետյանը 27 տարեկան է: Արելեյագետ է, գիտական հոդվածների հեղինակ:



Միջիթար Հայրապետյանը 2012-ին թուրքագետ Գեորգ Պետրոսյանի հետ հիմնել է AllTurkey.am թուրքագիտական պորտալը: Աշխատել է մի շարք լրատվական գործակալություններում՝ որպես վերլուծաբան:

ՄԱՆԵ ԹԱՆՈՒՅԱՆ

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Մանե Թանոյանը 40 տարեկան է, ավարտել է Հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության ֆակուլտետը, ինչպես նաև Հայաստանի ամերիկյան համալսարանի բիզնեսի կառավարման բաժինը:



2009 թվականից աշխատել է «Մինոփսիս Արմենիա» ՓԲԸ-ում՝ որպես ֆինանսական տնօրենի տեղակալ, գլխավոր հաշվապահ:

2017 թվականին «Ելք» դաշինքի կողմից ընտրվել է ԱԺ պատգամավոր: «Լուսավոր հայաստան» կուսակցության փոխնախագահն է, ունի երկու երեխա:

ՀՐԱԶՅԱ ՌՈՍՏՈՄՅԱՆ

Արտակարգ իրավիճակների նախարար Հրայր Թոստամյանը 37 տարեկան է:




Մասնագիտությամբ ատամնաբույժ-թերապեւտ է: Դասախոսել է Երևանի պետական բժշկական համալսարանում: 2012-ին նշանակվել է ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարար:

Այդ պաշտոնը զբաղեցրել է նաև 2016-ին: Երկար տարիներ խաղացել է բասկետբոլի Հայաստանի հավաքականի կազմում:

ՀՀ սպորտի վարպետ է, Միջազգային կարգի մրցավար: Ռոստոմյանն անկուսակցական է:





ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Է ն ե ր գ ե տ ի կ ենթակառուցվածքների եւ բնական պաշարների նախարար Արթուր Գրիգորյանը 49 տարեկան է: Աշխատել է արդարադատության նախարարությունում, Վերահսկիչ պալատում: 2010-ին նշանակվել է ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար ԲԶԿ-ի քվտայով: Արդարադատության փոխգնդապետ է: Ամուսնացած է, ունի երկու զավակ:



ԱՐԹՈՒՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Գյուղատնտեսության նախարար Արթուր Խաչատրյանը 46 տարեկան է: Մ ա ս ն ա գ ի տ ո լ յ ա մ ք ֆիզիկոս է: Ավարտել է ԵՊՀ-ն, ապա Հայաստանի ամերիկյան համալսարանը: Արթուր Խաչատրյանը Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու է: 2016-2017թթ. աշխատել է ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարությունում՝ որպես նախարարի տեղակալ, ապա նշանակվել է Շիրակի մարզպետ: Տիրապետում է հայերեն, ռուսերեն եւ անգլերեն լեզուներին: 1991թ.-ից ՀՅԴ անդամ է: Ամուսնացած է, ունի 3 երեխա:



ԱՐՄԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Առողջապահության նախարար Արմեն Թորոսյանը 36 տարեկան է, ավարտել է Երեւանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանը: 2010-2011թթ. ՀՀ ԱՆ տուրքերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոնի Սոնիթորինգի եւ գնահատման բաժնի վարիչն է եղել, տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարը: Եղել է ՄԻԲՍ բժշկա-ախտորոշիչ կենտրոնի տնօրենը: Հեղինակ է հայաստանյան եւ միջազգային գիտական ամսագրերում տպագրված մի շարք հոդվածների: Անկուսակցական է: Ամուսնացած է, ունի երկու զավակ:



ԼԻԼԻԹ ՄԱԿՈՒՆՑ

Մշակույթի նախարար Լիլիթ Մակունցը 35 տարեկան է, բանասիրական գիտությունների թեկնածու: Անցել է դիպլոմավորված դասընթաց Ամերիկայի Թաֆթս համալսարանի Տլեյչերի ամառային դպրոցում: 2005թ.-ից մինչ օրս դասավանդում է Հայ-ռուսական համալսարանում: 2016 թթ.-ից պայմանագրային հիմունքով աշխատում է Ամերիկյան խաղաղության կորպուսում: Ամուսնացած չէ:



ԱՐԾՎԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

Տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարար Արծվիկ Մինասյանը 46 տարեկան է, մասնագիտությամբ տնտեսագետ է:

իրավաբան: ԵՊՀ-ից հետո կարճաժամկետ ծրագրերով ուսումը շարունակել է Մոսկվայում, Վաշինգտոնում եւ Նյու Յորքում: 2012 եւ 2017 թվականներին երկու անգամ ՀՅԴ կողմից ընտրվել է ԱԺ պատգամավոր: 2005-2007 թթ. եղել է ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի փոխնախարար: Եղել է Էկոնոմիկայի նախարար եւ բնապահպանության նախարար: Արծվիկ Մինասյանը ՀՅԴ անդամ է:



ԷՐԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Բնապահպանության նախարար Էրիկ Գրիգորյանը 39 տարեկան է: Սովորել է ԵՊՀ-ում, Հունաստանում, Գերմանիայում, մասնագիտությամբ տնտեսագետ է: 2002 թվականից աշխատում է բնապահպանության նախարարությունում, որտեղ զբաղեցրել է տարբեր պաշտոններ: Աշխատել է Հայաստանի Ամերիկյան համալսարանում, ՄԱԿ-ի ու ԵԱՀԿ-ի ծրագրերում: 2017-ի փետրվարից եղել է վարչապետի օգնական: Գիտական հոդվածների հեղինակ է: Անկուսակցական է, ամուսնացած է, ունի երկու որդի:



ԼԵՎՈՆ ՎԱՀՐԱՅԱՆ

Սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարար Լեւոն Վահրայանը 34 տարեկան է, սովորել է Ֆիզիկական կուլտուրայի պետական ինստիտուտում, որտեղ էլ 2006-2010թթ. դասախոսել է: Ավարտել է նաեւ Պետական կառավարման ակադեմիան: Աշխատել է սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարությունում (նախարարի օգնական, ապա՝ խորհրդական), ՀԱՕԿ-ում: Նա նախարարության մասսայական սպորտի եւ ֆիզիկական դաստիարակության քաղաքականության վարչության պետն էր: Ամուսնացած է, ունի մեկ դուստր:



ԱՇՈՏ ՀԱԿՈԲՅԱՆ

Տրանսպորտի, կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Աշոտ Հակոբյանը 50 տարեկան է: Ավարտել է Երեւանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը: Աշխատել է Ներքին գործերի եւ ազգային անվտանգության նախարարությունում ոստիկանության քննչական գլխավոր վարչությունում: Եղել է քննչական կոմիտեի Երեւան քաղաքի վարչության Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի պետ, Ընդհանուր բնույթի հանցագործությունների վարչության պետ: Արդարադատության գնդապետ է: Վերջին տարիներին զբաղվել է մասնավոր բիզնեսով: Ամուսնացած է, ունի 2 երեխա:



ՎԱԼԵՐԻ ՕՍԻՊՅԱՆ

ՀՀ ոստիկանապետ Վալերի Օսիպյանը 48 տարեկան է: Նա տարբեր տարիների ոստիկանությունում զբաղեցրել է պաշտոններ, այդ թվում՝ եղել է գնդի վաշտի հրամանատար,

ՀՀ Սփիւռքի նախարար. «Անհրաժեշտ է Հայաստանը դարձնել բոլոր հայերու երկիրը»

ՀՀ Սփիւռքի նորանշանակ նախարար Մխիթար Հայրապետեան իր facebook-եան էջին մէջ կը գրէ.



Հայաստանի բնակչութեան թիւը հնարաւորինս կարճ ժամկէտի մէջ կրկնապատկելու միջոցը Մեծ հայրենադարձութիւնն է. անհրաժեշտ է Հայաստանը դարձնել բոլոր հայերու երկիրը, այնպէս, որ աշխարհի որեւէ կէտի մէջ գտնուող հայ ինքզինք նոյնականացնէ հայկական պետականութեան հետ եւ զայն դիտարկէ եթէ ոչ իր, առնուազն իր սերունդներու պոտենցիալ բնակավայր»:

Իբրեւ ՀՀ սփիւռքի նախարար՝ իմ աշխատանքային առաջին իսկ օրէն ինքնամոռաց ու ողջ եռանդով պիտի լծուիմ դեռ մէկ տարի առաջ մեր նախընտրական ծրագրի մէջ տեղ գտած այս գաղափարը կեանքի կոչելու գործին:



գնդի հրամանատարի տեղակալ, գնդի հրամանատար, Երեւան քաղաքի վարչության հասարակական անվտանգության բաժնի պետ, Երեւան քաղաքի վարչության պետի տեղակալ: Օսիպյանն աչքի է ընկել որպես բողոքի ակցիաների ժամանակ ոստիկանական ստորաբաժանումները ղեկավարող անձ: 2016-ին ՊՊԾ գնդի գրավման ժամանակ պատանդառվել է «Մասնա ծոերի» կողմից: Ամուսնացած է, երկու 2 զավակ:



ԱՐԹՈՒՐ ՎԱՆԵՑՅԱՆ

ԱԱԾ տնօրեն Արթուր Վանեցյանը 39 տարեկան է, Մանկո Պետերբուրգի արտաքին տնտեսական կապերի եւ իրավունքի համալսարանում, ՌԴ անվտանգության ծառայության ակադեմիայում: ԱԱԾ համակարգում է 2000 թվականից, որտեղ զբաղեցրել է տարբեր պաշտոններ: 2016-2018 թթ. զբաղեցրել է ԱԱԾ Երեւանի քաղաքային վարչության պետի տեղակալի պաշտոնը: Արթուր Վանեցյանը գնդապետ է: Ամուսնացած է, ունի երկու զավակ:



Հ.Գ. ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը 20-օրյա ժամկետում Ազգային ժողովին կներկայացնի կառավարության ծրագիրը:

Յիշէ...Յարգէ...Պայքարէ...Պահանջէ

Յարգելի Հայրենակից

Հայ ազգի ոչնչացման՝ ճգնաժամային ցեղասպանութենէն եւ տաժանակիր տառապանքի թշուառութիւններէն, 103 տարիներ անցած են:

Վերքը կը մնայ անունջ եւ անմոռանալի:

Հայոց ցեղասպանութենէն ետք, երեք տարիներու իրարյաջորդ քաղաքական տխուր եղելութիւններուն, կը յաջորդէ Սարտարապատի դիցազնամարտի յաղթանակը, որուն շնորհիւ կը կերտուի Ազատ Անկախ Հայաստանի առաջին պետականութեան հռչակումը, որմէ արդէն անցած են հարիւր տարիներ:

Յունաստանի Ռ.Ա.Կուսակցութեան՝ Հայ Իրաւանց Խորհուրդը՝ կը նախաձեռնէ, հովանաւորութեամբ Յունահայոց Թեմական Խորհուրդին, Կիրակի 3 Յունիս 2018-ի առաւօտեան ժամը 10.30ին,

Աթէնքի «GLORIA» թատրոնին մէջ ΙΠΠΟΚΡΑΤΟΥΣ 7 και ΠΑΝΕΠΙΣΤΗΜΙΟΥ

-Ոգեկոչել՝ 24 Ապրիլ 1915-ի Հայոց Ցեղասպանութիւնը

-Փառաբանել՝ 22-26 Մայիս 1918 Սարտարապատի յաղթանակը կերտող հերոսներու յիշատակի եւ

-Յիշատակել՝ 28 Մայիս 1918ի, Հայաստանի ազատ անկախ հռչակման՝ առաջին հանրապետութեան 100 ամեակը:

Օրուան խորհուրդը յարգելի ներկաներուն կը հաղորդէ յունարէն լեզուով, Յոյն հանրաժանօթ քաղաքագէտ, Յունաստանի նախկին արդարութեան նախարար եւ ներքին գործոց նախարար՝

ΧΑΡΑΛΑΜΠΟΣ ΚΑΣΤΑΝΙΔΗΣ

Որ իր հռետորական ոգեւորիչ շունչով՝ միշտ ներշնչած է իր ունկնդիրները:

Ուխտի Օր է՝ Մասնակցէ՝ Յիշէ՝ Յարգէ՝ Պայքարէ՝ Պահանջէ

Με μεγάλη μας χαρά σας προσκαλούμε στην βραδιά της επετείου της κορευτικής ομάδας
"ΑΒΕΤΙΣ"

που αιώως κλείνει φέτος τα 5 χρόνια

Η βραδιά έχει τον τίτλο ΠΑΤΡΙΔΑ ΕΙΜΑΣΤΕ ΓΕΝΝΗΜΕΝΟΙ ΑΠΟ ΤΗΝ ΑΓΑΠΗ ΣΟΥ

και είναι αφιερωμένη στις ηρωικές μάχες του Μαΐου της Αρμενίας.

Λεόντειος Σχολή Νέας Σμύρνης - Θεμιστοκλή Σοφούλη 2

Միտով հրավիրում ենք «ԱՎԵՏԻՍ»

պարախմբի հոբելյանական երեկոյին՝ մենք արդէն 5 տարեկան ենք: Երեկոն նվիրվում է Հայաստանի Մայիսյան հերոսամարտերին՝ ՔՈ ՍԻՐՈՒՅ ԵՆՔ ԾՆՎԵԼ, ՀԱՅՐԵՆԻՔ խորագրով:

Տάββατο 26 Μαΐου 2018 - 7.30 μμ.

ΕΙΣΟΔΟΣ ΕΛΕΥΘΕΡΗ - ΔΙΑΤΙΘΕΤΑΙ ΠΑΡΚΙΝΓΚ

Քրիստինա Պերպերեանի Յիշատակին

Մայր մը՝ ծնունդով խոնարհ, ժպտերէս, մեծահոգի, աշխատասէր, խոր հաւատքով եւ կամքի զօրութեամբ, մաքառեցաւ կեանքի ամենադժին դառնութիւններուն դէմ, միշտ զինուած մայրական անհուն գուրով եւ մարդկային անսպառ բարութեան սիրով:

Ան յաղթահարեց՝ ճակատելով ամէնօրեայ կեանքէն իրեն յարուցուած դժուարութիւնները, առանձին լուռ ու անձայն աշխատանքով եւ ծով համբերութեամբ:

Ինչ որ ճանչցած եմ տարիներու ընթացքին, այս ազնուական հայ կնոջ՝ Քրիստինա Պերպերեանի մօտ, որպէս մայր եւ որպէս մարդ, կը գերազանցէր սահմանումները՝ իր մայրական զգացումներով՝ գուրգուրանքով՝ գուրով եւ գոհաբերութեամբ:

Ան եղաւ տիպար մայր մը՝ որուն սիրտը շաղախուած էր՝ մայրական սիրով եւ գորովով:

Իր մարդկային նկարագիրը, հարուստ էր գեղեցիկ առաքինութիւններով՝ որպէս Աստուածավախ հաւատացեալ, բարեւեր, նրբազգաց, աշխատասէր մարդ: Խորապէս յարգալից ու ծառայասէր էր՝ հանդէպ բոլոր մարդկանց եւ իր շրջապատին, եւ մասնաւորապէս երախտագէտ՝ նոյնիսկ անոնց որոնք մէկ բարեւ կամ ժպիտ հաղորդած էին իրեն:

Իր կեանքին ճշմարիտ իմաստը եւ վաստակը եղած էր, իր երկու զաւակները՝ Լուսինէն եւ Կիրակոսը, որոնք իր հոգին ողողած էին անհուն երջանկութեամբ եւ անդորրութեամբ, իրենց պատուաբեր վարքով՝ գործունէութեամբ՝ աշխատանքով՝ մայրասիրութեամբ՝ ազնիւ եւ բարի համբաւով եւ ներկայութեամբ:

Քրիստինա Պերպերեան մեր յիշողութեան մէջ պիտի մնայ, օրինակելի տիպար մայր մը՝ եւ ազնուական տոհմիկ պատուական առաքինագարդ անձնաւորութիւն մը, որուն յիշատակը մեր մտքերուն մէջ կը մնայ պայծառ եւ անմոռանալի:

Բարեխնամ Աստուած՝ զիտէ իր արդարները յաւերժական լոյսին արժանի ընել:

Զաւէն Գ. Գրիգորեան

Աթէնք 15 Մայիս 2018

ՄԱՀԱԶԴ

Կարպիս եւ Աննա Հազարեան եւ զաւակները եւ համայն ազգականները կը գումեն մահը իրենց մօրեղբոր եւ հարազատին՝

Վաղինակ Գալայճեանի

որ պատահեցաւ 16 Մայիս 2018ին, եւ մարմինը ամփոփուեցաւ Աթէնքի Գ. գերեզմանատունը:

Ցաւակցութիւն

Մեր խորին ցաւակցութիւնները եւ վշտակցութիւնը կը յայտնենք Կարպիս եւ Աննա Հազարեան ընտանիքին եւ համայն պարագաներուն իրենց մօրեղբոր եւ հարազատին՝

Վաղինակ Գալայճեանի

մահուան տխուր առթիւ:

*Արարատ Մ.Մ.Միութիւն
Արարատի Տիկնանց Մարմին
“Նոր Աշխարհ” շաբաթաթերթ*

Պ Տ Ո Յ Տ

Հունահայոց թեմի երիտասարդաց միութիւնը կը կազմակերպէ 10/06/2018 կիրակի մէկ օրյա պտույտ դէպի Սուրբ Թեոդորա (Αγία Θεοδώρα):



Առավոտյան 7.30 Կոնտինենտալ Պանդկ կ 7.45 Մետրո Եգալեո: Տեղ ապահովելու զանգահարէք Արմինէ 6937678062, Պետրոս 6987675444 :

**Ամավերջի Հանդէս
Հայ Աւետարանական Մանկապարտէզի**

Սիրով կը հրաւիրենք Ձեզ, Հայ Աւետարանական Մանկապարտէզի Ամավերջի հանդէսին, որ տեղի պիտի ունենայ Չորեքշաբթի 6 Յունիս 2018, կ.է. ժամը 7-ին Հայ Աւետ. Եկեղեցոյ ժողովարանին մէջ:

Եկէք սիրելիներ քաջալերենք եւ վայելենք մեր երեխաները եւ գնահատենք մեր ուսուցչական կազմը իրենց անխնայ, նուիրեալ եւ անսակարկ աշխատանքին համար:

ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ



**ՆՈՐ ԱՇԽԱՐՀ
ԱԶԳԱՅԻՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ.
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

Մեփականութիւն
ԱՐԱՐԱՏ Մ Մ ՄԻՈՒԹԻՒՆ
Միսթու 33, Նիքէա, Յունաստան

Համակարգչային
շարուածքը եւ էջադրումը՝
ՆՈՐ ԱՇԽԱՐՀ շաբաթաթերթի

Տնօրէն՝
Ընկ. Սարգիս Խաչատուրեան

Արտօնատէր -
Փաստաբան՝
ընկ. Յակոբ Տէւճեան

“NOR ASXAP”
Արմենիկ Էթոմաճաճա
Էթիմերճա
Իճոկթէճա “APAPAT”
Փիլոլոլոլոլոլ Աթլիթիկոլ Տոմաթէճո

Ըթթոնթիճ
Տարկիճ Խաթթաթոլրճն
Էթկոթիճ -
Իաթոթոլ Փէթճաճն Ըթկիթոլոլ

Տիթոլոլ 33 - TK 18450 - Նիկաճա
Տիլ: 210-4926085
“NOR ASHKHAR”
Armenian Cultural Social Weekly

33 Sistou Str.
GR 18450 NIKEA GREECE
Tel-Fax: 00+30+210-4926085



Բացի իմբազրականներէն, յօղոլաճազիրներու տէսակէտներն ոլ գաղափարները անպայմանօրէն չեն արտայայտէր թերթին ոլղէզիճը:



ΔΗΜΟΣ Π.ΦΑΛΗΡΟΥ
ΔΗΜΟΤΙΚΕΣ ΒΙΒΛΙΟΘΗΚΕΣ Π.ΦΑΛΗΡΟΥ



Ο Δήμαρχος Π.Φαλήρου Διονύσης Χατζηδάκης, η «ΑΡΑΡΑΤ ΕΛΛΗΝΟΑΡΜΕΝΙΚΗ ΦΙΛΟΛΟΓΙΚΗ ΑΘΛΗΤΙΚΗ ΕΝΩΣΗ» και η Αντιδήμαρχος Περιβάλλοντος και Υπεύθυνη Δημοτικών Βιβλιοθηκών Π.Φαλήρου Βέικυ Ανδρικοπούλου, σας προσκαλούν στην αρμένικη θεατρική παράσταση με τίτλο «Υψηλότερη δύο αφεντάδων» σε σκηνοθεσία Χάικ Κασαբτζιάν (ελληνική απόδοση)



Տըն Սէթթըն 31 Մաճոլ, 2018
& օրա 20:00
Տըն ՍՕԼԿՈՐՈ Տըն Ըթթարթիլոլ Ս.Փալիթոլ
(Տըթթաթոլոլ 51 & Արթէթաճոլ)

ՆԿԱՐ ԵՒ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԸ

«Ազատ Օր»ի Չորեքշաբթի, 11 Հոկտեմբեր 2017-ի թիվին, երրորդ էջին վրայ, կայ յայտարարություն մը՝ նկարով: Իրենք զիրենք Ռամկավար կոչած չորս իմաստակ ղեկավարներ, այցելություն տուած են Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին, ուր նկարահանուած են եւ յայտարարություն մը կատարած են:

Ուրեմն՝ նախ ձեզ ո՛վ լիազօրեց պարոնայք, որ դուք այսպիսի յայտարարություններ կը կատարէք: Դուք՝ նախ խորհրդակցեցաք Լիբանանի կամ Պէրսիոյ Էջմիածնասէր կոչուած բոլոր կողմերուն հետ, դուք բնաւ կարծիքը առիք ընդհանուր Էջմիածնական կողմերուն:

Եթէ դուք ձեզի իշխանություն տուիք եւ այդ առաքելութեամբ, այդ այցելությունը կատարեցիք, մենք ստիպուած ենք ձեզի շատ համառօտ բացատրություններ տալու եւ յիշեցնելու, որ դուք իրաւունք չունիք այսպիսի յայտարարություններ կատարելու, այլ դուք իրաւունք ունէիք ձեր անձնական այցելությունը կատարելու եւ ձեր անձնական յայտարարությունները կատարելու եւ ոչ թէ Ռամկավար կուսակցութեան անունով:

Ասիկա դուք կատարեցիք որպէս զի որոշ կողմի մը հաճելի թուելու եւ կամ տուրք մը վճարելու, ի դիմաց ի՛նչ վարձատրութեան, բան մը որ մենք չենք գիտեր:

Բայց ձեր դիմացիները շատ լաւ գիտեն որ, ասիկա խեղճութեան հասնող խեղկատակություն, անհեթեթություն եւ ծաղրածու կատակերգություն մըն է:

Աւելի լաւ չէ՛ր ըլլար որ, դուք այդպիսի յայտարարություններ չարտասանէիք եւ անգամի մը համար մտածէիք թէ ի՛նչ պէտք էր յայտարարէիք:

Նախ ձեզի յիշեցնենք եւ բացատրենք, թէ ինչ որ պատահած է 1955 թուականին ետք, «հին պատկեր մը» չէ, այլ հին ահաւոր դէպք մըն է, որ ամբողջ սփիւռքը կտոր կտոր ըրաւ, փշրեց եւ ժամանակի ընթացքին այդ վերքը ոչ թէ սպիացաւ, այլ բորբոքեցաւ եւ հայոց ցեղասպանութենէն հազիւ 40 տարիներ անցած, այդ ահաւոր քանդիչ վերքը բացուեցաւ, կրկին անգամ սփիւռքի արիւնահոսությունը շարունակուելու:

Պարոնայք, վաթսուն տարիներէ ի վեր, դուք ամբողջ սփիւռքը հիւժող փճացնող վերքի հարցի մը հանդէպ, այսքան անլուրջ մօտեցում մը ունեցաք: Այս ի՛նչ անհեթեթ մօտեցում եւ արտայայտություններ են, երբ ամբողջ սփիւռք մը կտոր կտոր եղած է, եւ «Ան-միասնականությունը» ոչ թէ սառած է, այլ քարացած վիճակ ստացած է եւ համայն սփիւռքը հակառակ իր բոլոր աշխատունակութեան, օր ըստ օրէ կը հիւժի կը լուծուի եւ դուք այսքան լուրջ հարցի մը նկատմամբ, այսպիսի տհաս համբակ դիրք կ'ունենաք եւ անտեղի յայտարարություններ կը կատարէք:

Իսկ եթէ դուք այդ ձեռով կը մտածէք, դուք ազատ էք, եւ մի մոռնաք որ, մենք, մենք ճշմարիտ եւ իրաւ Ռամկավարներն ենք, բայց ոչ դուք եւ բոլորս կ'ապրինք ազատ աշխարհի մէջ, ինչպէս դուք ձեր յայտարարութեան մէջ կը յիշատակէք, որ «կեանքը շարժանկար է»: Դուք իրաւունք ունիք ձեր ուզածին պէս շարժելու, ձեր կարծիքը ձեր համոզումը՝ ձեր սկզբունքը՝ ձեր գաղափարը փոխելու, բայց դուք իրաւունք չունիք Ռամկավար Ազատականներու անունով խօսելու կամ յայտարարություններ կատարելու: Ըստ երեւոյթին դուք հրաժարած էք այլեւս ռամկավար ազատական ըլլալէ, ուստի թոյլ տուէք որ Ռամկավարները խօսին, ինչպէս որ մենք հիմա կը խօսինք:

Լաւ կ'ըլլայ որ, դուք պարոնայք, անկիւն մը քաշուիք եւ քիչ մը սփիւռքի վերջին տասնամեակներուն պատմությունը ոչ թէ պարզ կարդաք, որպէս զի ոչ թէ միայն իրողությունները դէպքերը եւ ճշմարտությունները իմանաք, այլ քաջատեղեակ ըլլաք այդ արիւնոտ վերքերուն մասին, որոնք սփիւռքը հոս հասցուցին, եւ ատկէ վերջը երթաք եւ նկարուիք ու այդ յայտարարությունները կատարէք:

Հաւանաբար ձեզի նման իմաստակներուն պէտք է յիշեցնենք որ, 1955-1957-ի ակերիչ դէպքերէն առաջ 1915-ի «Հայոց Ցեղասպանութենէն» ետք, երբ կորսնցուցած էինք հայրենիք, մեր դարաւոր հողերը, մեր հազարամեակներու քաղաքակրթությունը, մեր մշակոյթը եւ ահաւոր զոհ տուած էինք 2 միլիոնէ աւելի նահատակներով: Սակայն Սարտարապատեան սրբազան պատերազմով, կրցած էինք փրկել փոքր հող մը եւ ստեղծել անկախ Հայաստան՝ հայրենիք մը եւ 1920-էն ետք այդ նոյն կողմը ի՛նչ վերքեր չբացաւ այդ օրուրնէ մինչեւ 1957-ը:

Ուրեմն, երբ դուք մեզի առիթը կ'ընծայէք, որպէսզի ձեզի եւ այդ անձերուն յիշեցնենք որ, հազիւ հայոց ցեղասպանութենէն ետք ի՛նչ սխալներ գործած են անոնք, ի՛նչ վերքեր բացած են, ի՛նչ ողբերգություններ ստեղծած են այդ նոյն անձերը, խեղճ եւ մինչեւ այսօր անօգնական հայութեան զլխուն:

1.- Թուրքերը, որոնք հայոց ցեղասպանությունը գործեցին, հազիւ երեք տարի չանցած, այդ նոյն անձերը իրենց ձեռքերը երկարեցին թուրքերուն եւ համագործակցութեամբ թուրքերուն, կազմակերպեցին 18 Փետրուար 1921-ի ապստամբությունը:

2.- Այդ թուականին մինչեւ 1937 թուականը, այդ նոյն խումբը՝

մասնակցած է Կովկասի մէջ ստեղծուած բոլոր հակա-Հայաստանեան շարժումներուն:

3.- 15 Դեկտեմբեր 1942-ին Պեռլինի մէջ հիթլերականներու հովանաւորութեամբ, կը ստեղծուի՝ «Հայկական Ազգային Խորհուրդը» եւ անոնք սփիւռքի բոլոր երկիրներէն հայ երիտասարդները կը զինուորագրեն եւ զիրենք Կովկասի ճակատը կը դրկեն, պատերազմելու համար Հայաստանի հայ զինուորին դէմ, որպէս զի տապալեն Հայաստանի կառավարությունը եւ իրենք իշխանութեան զլուխը անցնին: Հարց կուտանք ձեզի պարոններ, քանի՛ հայ երիտասարդներ ողջ վերադարձան այդ ճակատէն:

4.- Երկրորդ համաշխարհային պատերազմէն ետք, նոյն անձերը Պէրսիոյ մէջ հաւաքուեցան, որպէս զի Միջին Արեւելքի երկիրներուն մէջ, իրենց ծառայությունը մատուցանեն մեզի անձանօթ կողմերու, բան մը որ մենք չենք գիտեր, իսկ եթէ իրենք իրենց արխիւները բանան, այն ատեն բոլորս պիտի տեղեկանանք, այդ ծառայություններուն մասին:

Այստեղ ձեզի պէտք է որոշապէս յիշեցնենք, որ այս բոլոր պատմական եղելությունները ճշմարտությունները, մենք ուշադրութեամբ եւ կեդրոնանալով քաղած ենք Դաշնակցական կարեւոր ղեկավար առաջնորդներու գրած գիրքերէն՝ յուշագրություններէն, ինչպիսիք Միքայէլ Վարանդեան, Սիմոն Վրացեան, Յակոբ Տէր Յակոբեան, Ալեքսանտր Խատիսեան, Կարօ Սասունի եւ Իրաւ Դաշնակցականներէ, ինչպիսիք Շահան Լաթալի, Խոսրով Թիթիսեան, Անդրանիկ Օստոյեան եւ ուրիշներ:

Վերադառնալով ձեր նկարահանութեան երջանկութեան, արդէ՞ք այս բոլորը կատարեցիք որպէս զի միայն նկարուէիք եւ թերթերուն մէջ, ձեր նկարները տեսնելով ուրախանայիք:

Արդէ՞ք քաւելի լաւ չէր ըլլար, որ նկարուէիք եւ ձեր նկարը թերթերուն մէջ երեւար եւ ձեր չհասկցած հարցերուն մասին չարտայայտուէիք:

Ձեր իմաստակ խօսքերուն մէջ, կը յայտարարէք, թէ «կեանքը սառած պատկեր մը չէ»:

Ձեր այսքան իմաստակ խելացի ըլլալնիդ չէինք գիտեր, հաւանաբար դուք կը խորհիք որ, ասիկա չքնաղ յայտարարություն մըն է: Այ՛ մարդիկ, անգամ մը փողոց իջէք եւ ամենէն հասարակ, ամենէն բթամիտ անցորդի մը հարցուցէք, եթէ ներկայիս կեանքը սառած պատկեր մըն է: Ո՛ր կ'ապրիք պարոնայք, ո՛ր աստղին տակ ծնած էք, որպէս զի այսպիսի անհեթեթ յայտարարություն մը կատարէք:

Ինչ որ պատահեցաւ 1955-էն ետք՝ պատմական ամենախոր՛ ամենադառն վերքերէն մէկն է:

Երբ հայ ժողովուրդը տակաւին, թիթեղէ հիւղաւաններու մէջ կ'ապրէր՝ Յունաստան, Լիբանան, Սուրիա, Եգիպտոս եւ Յորդանան, երբ տարագիր հայությունը հացի փշրանքներով իր օրերը կ'անցընէր եւ այդ տարագիր հայությունը անտուն՝ անպաշտպան անօգնական թշուառական զանգուածներու վերածուած էր, կորսնցնելով հող՝ հայրենիք կեանք եւ ամէն ինչ, եւ սփռուած աշխարհի չորս կողմերը օտարութեան զուլումին մէջ, այս բոլորին վրայ եկաւ ակելնալու, այս գանդիչ առիւնաբբու ողբերգությունը:

Մենք տարիներու ընթացքին՝ երբ լռեցինք, այդ չի նշանակեր որ, մենք մոռցանք այդ եղբայրասպանությունները մոռցանք արիւնայեղությունները զանդումները եւ ողբերգությունները. Որովհետեւ անոնք չեն մոռցուիք, մինչեւ որ Անթիլիասի իշխանաւորները հասկնան եւ ըմբռնեն, որ իրենք այդ չապիացած վերքերը բացին եւ իրենք պէտք է, այդ ազգային նախանձախնդրությունը ունենան նախաձեռնելու, սպիացնելու, ամոքելու այդ վերքերը եւ ոչ ուրիշներ, որպէս զի կարենանք խօսիլ Միասնականություն ըսուած բանին մասին:

Լռել չի նշանակեր որ հարցերը մոռցուած են: Այս պարագային լռել կը նշանակէ խորհիլ՝ մտածել՝ զոջալ եւ անդրադառնալ պատահած քանդումներուն մասին: Լռել կը նշանակէ լուծումներ որոնել, լռել չի նշանակել միասնականութեան մասին չմտածել:

Իսկ եթէ՛ որոշ խմբաւորումներու համար, ազգային արիւնահոս վերքերը որեւէ նշանակություն չունին, այդ պարագային մենք մեր ազգային գոյատեւման պարտականությունը կատարած կ'ըլլանք եւ բոլոր պատասխանատուությունը կը ձգենք միւսներուն, սակայն եթէ այս բոլորէն վերջ, որեւէ նշանակություն չունի սփիւռքահայութեան վիճակը իրենց համար, այդ պարագային դժբախտաբար սփիւռքի ճակատագիրը որոշուած է արդէն «ձերմակ ջարդ»ով, որովհետեւ այս վիճակը կրնայ ակելի վատթարանալ եւ ակելի այլասերիլ. այդ կը նշանակէ թէ, ակելի ընկղմիլ, ակելի օտարանալ, ակելի ձուլուիլ, եւ այս բոլորը տարիներու ընթացքին, սփիւռքը պիտի առաջնորդէ ուժացումի:

Յաջորդ անգամ, իմաստակ պարոնայք, նկարներ հրատարակեցէք ուրախացէք՝ զուարճացէք՝ հրճուեցէք՝ սակայն մի փորձէք յայտարարություններ կատարել Ռամկավար Ազատական Կուսակցութեան անունով, որովհետեւ դուք իրաւունք չունիք այս հարցերուն մասին խօսելու: